

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Շիճուկային B խմբի մենինգոկոկային պատվաստանյութ (MenB): Ի՞նչ է անհրաժեշտ ձեզ իմանալ:

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis
Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս՝ www.immunize.org/vis

1 Ինչո՞ւ պատվաստվել:

Մենինգոկոկային հիվանդությունը լուրջ հիվանդություն է, որի հարուցիչը մի մանրէ է, որն անվանվում է՝ Neisseria meningitidis: Այն կարող է հանգեցնել մենինգիտի (գլխուղեղի և ողնուղեղի թաղանթի վարակ) և արյան վարակների: Մենինգոկոկային հիվանդությունը հաճախ առաջանում է առանց նախանշանների, նույնիսկ այն մարդկանց շրջանում, ովքեր այլ առումով առողջ են:

Մենինգոկոկային հիվանդությունը կարող է տարածվել մի մարդուց մյուսին՝ անմիջական շփման միջոցով (հագի կամ համբուրվելու) կամ երկար շփման արդյունքում՝ հատկապես երիտասարդ մարդկանց շրջանում, ովքեր ապրում են միևնույն տանը:

Գոյություն ունի առնվազն 12 տեսակի N. meningitidis, որոնք կոչվում են «շիճուկային խմբեր»:

Մենինգոկոկային հիվանդությունների մեծ մասն առաջանում է շիճուկային A, B, C, W և Y խմբերից:

Ցանկացած անձ կարող է ստանալ մենինգոկոկային հիվանդություն, սակայն որոշ մարդիկ առավել ռիսկի տակ են, ներառյալ՝

- Մեկ տարեկանից ցածր մանուկները
• 16-ից մինչև 23 տարեկան դեռահասները և երիտասարդները
• Իմունային համակարգի վրա ազդող որոշակի առողջական խնդիրներ ունեցող մարդիկ
• Մանրէակենսաբանները, ովքեր մշտապես աշխատում են N. Meningitidis առանձնացված մանրէների հետ
• Մարդիկ, որոնք իրենց համայնքում տարածված համաճարակի պատճառով ռիսկի տակ են:

Նույնիսկ բուժման դեպքում՝ մենինգոկոկային հիվանդությունն սպանում է 100 վարակված մարդկանցից 10-ից մինչև 15-ին: Եվ նրանց շրջանում, ովքեր կենդանի են մնացել, յուրաքանչյուր 100-ից մոտավորապես 10-ից 20-ը, կտառապեն լսողության կորստից, ուղեղի վնասվածքից, երկամների վնասվածքից, անդամահատումից, Նյարդային համակարգի խնդիրներից կամ մաշկի փոխպատվաստման հետևանքով առաջացած կոպիտ սպիներից:

Շիճուկային B խմբի մենինգոկոկային (MenB) պատվաստանյութերը կարող են օգնել կանխելու շիճուկային B խմբի առաջացրած մենինգոկոկային հիվանդությունը: Մենինգոկոկային այլ պատվաստանյութերը խորհուրդ են տրվում շիճուկային A, C, W և Y խմբերից պաշտպանվելուն օգնելու համար:

2 Շիճուկային B խմբի մենինգոկոկային պատվաստանյութերը

Շիճուկային B խմբի մենինգոկոկային (MenB) երկու պատվաստանյութերը՝ Bexsero-Ն® և Trumenba-Ն®,

Serogroup B Meningococcal (MenB) VIS – Armenian (08/09/2016)

արտոնագրված են ԱՄՆ սննդի և դեղորայքի վարչության (FDA) կողմից:

Այս պատվաստանյութերը սովորաբար խորհուրդ են տրվում 10 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անձանց, ովքեր շիճուկային B խմբի վարակների բարձր ռիսկի տակ են, ներառյալ՝

- Մարդիկ, ովքեր ռիսկի տակ են շիճուկային B խմբի մենինգոկոկային համաճարակի բռնկման պատճառով
• Ցանկացած մեկը, ում փայծաղը վնասված է կամ հեռացված
• Ցանկացած մեկը, ով տառապում է իմունային համակարգի հազվադեպ հանդիպող հիվանդությամբ, որը կոչվում է «կոմպլեմենտի համակարգի բաղադրիչների կայուն անբավարարություն»
• Ցանկացած մեկը, ով ընդունում է eculizumab կոչվող դեղը (կոչվում է նաև՝ Soliris®)
• Մանրէակենսաբանները, որոնք մշտապես աշխատում են N. Meningitidis առանձնացված մանրէների հետ:

Այս պատվաստանյութերը կարող են նաև տրվել 16-ից մինչև 23 տարեկան յուրաքանչյուր անձի՝ շիճուկային B խմբի մենինգոկոկային հիվանդության շտամների մեծ մասից կարճատև պաշտպանություն ընձեռելու համար: 16-ից մինչև 18 տարին պատվաստման համար նախընտրելի տարիքն է:

Լավագույն պաշտպանության համար շիճուկային B խմբի մենինգոկոկային պատվաստանյութի 1-ից ավել դեղաչափեր են պահանջվում: Բոլոր դեղաչափերի համար պետք է օգտագործվի միևնույն պատվաստանյութը: Հարցրեք ձեր առողջապահական խնամք ապահովողին դեղաչափերի քանակության և դրանց տրման միջև ընկած ժամանակահատվածների մասին:

3 Որոշ մարդիկ չպետք է ստանան այս պատվաստանյութը

Ձեզ պատվաստանյութ ներարկող անձին հայտնեք՝

- Եթե դուք սուր կամ կյանքին սպառնացող ալերգիաներ ունեք: Եթե դուք երբևէ շիճուկային B խմբի մենինգոկոկային պատվաստանյութից կյանքին սպառնացող ալերգիա եք ունեցել, կամ սուր ալերգիա ունեք այդ պատվաստանյութի որևէ բաղադրիչի հանդեպ, դուք չպետք է պատվաստանյութ ստանաք: Հայտնեք ձեր բժշկին, եթե գիտեք, որ որևէ սուր ալերգիա ունեք՝ ներառյալ սուր ալերգիան լատենքսի նկատմամբ: Նա կարող է ձեզ պատմել պատվաստանյութի բաղադրիչների մասին:
• Եթե դուք հղի եք կամ կրծքով կերակրում եք: Հղի կանանց կամ կրծքով կերակրող մայրերի համար պատվաստանյութի հնարավոր ռիսկերի մասին շատ տեղեկություններ չկան: Այն պետք է



օգտագործվի հղիության ընթացքում՝ միայն հստակ պահանջ լինելու դեպքում:

Եթե ունեք թեթևակի հիվանդություն, ինչպես, օրինակ՝ մրսաձուլությունը, դուք, հավանաբար, կարող եք այսօր ստանալ պատվաստումը: Եթե միջին աստիճանի կամ ծանր հիվանդություն ունեք, դուք, հավանաբար, պետք է սպասեք մինչև ապաքինվելը: Ձեր բժիշկը կարող է ձեզ խորհուրդներ տալ:

**4 Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը**

Ցանկացած դեղամիջոցի դեպքում՝ ներառյալ պատվաստանյութը, հնարավոր են կողմնակի ռեակցիաներ: Դրանք սովորաբար մեղմ են արտահայտված լինում և անցնում են ինքնաբերաբար մի քանի օրվա ընթացքում, սակայն հնարավոր են նաև լուրջ ռեակցիաներ:

Շիճուկային B խմբի մենինգոկոկային պատվաստանյութ ստացող մարդկանց կեսից ավելին ունեն **թույլ արտահայտված խնդիրներ**, որոնք առաջ են եկել պատվաստումից հետո: Այդ ռեակցիաները կարող են տևել 3-ից 7 օր և ներառում են՝

- Ցավի զգացողություն, կարմրաձուլություն կամ այտուցվածություն՝ ներարկման տեղում
- Հոգևածություն կամ թուլություն
- Գլխացավ
- Մկանների կամ հոդերի ցավ
- Բարձր ջերմություն կամ տենդ
- Սրտխանոց կամ լուծ

**Այլ խնդիրներ, որ կարող են ի հայտ գալ այս պատվաստանյութն ստանալուց հետո՝**

- Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժօգնություններից հետո՝ ներառյալ պատվաստումը: Մոտավորապես 15 րոպե նստած կամ պառկած մնալը կարող է օգնել կանխելու ուշաթափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք թեթև գլխապտույտ ունեք, կամ տեսողության փոփոխություն, կամ ականջներում զնգոց եք զգում:
- Որոշ մարդկանց մոտ թևի ցավ է լինում, որը կարող է ավելի սուր և երկարատև լինել, քան ներարկումների հետևող սովորական ցավի զգացողությունը: Սա շատ հազվադեպ է լինում:
- Ցանկացած դեղամիջոց կարող է առաջացնել սուր ալերգիկ ռեակցիա: Պատվաստանյութից առաջ եկած նման ռեակցիաները շատ հազվադեպ են՝ միլիոնավոր դեղաչափեր տալուց մոտավորապես 1 դեպք, և կարող են առաջանալ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ինչպես և ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ հանդիսանա:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք՝ [www.cdc.gov/vaccinesafety/](http://www.cdc.gov/vaccinesafety/)

**5 Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:**

- Ի՞նչ պետք է ես փնտրեմ:**
- Փնտրեք ձեզ վերաբերող ցանկացած բան, ինչպես, օրինակ՝ սուր ալերգիկ ռեակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն կամ անսովոր վարքագիծ:

Translation provided by the Immunization Action Coalition

**Սուր ալերգիկ ռեակցիայի** նշանները կարող են ներառել՝ ցան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, ծանր շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ և թուլություն: Դրանք սովորաբար սկսվում են պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ անց:

**Ի՞նչ պետք է ես անեմ:**

- Եթե դուք կարծում եք, որ դա **սուր ալերգիկ ռեակցիա** է կամ այլ անհետաձգելի դեպք, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-1-1 կամ գնացեք մոտակա հիվանդանոց: Հակաոակ դեպքում՝ զանգահարեք ձեր կլինիկա:

Այնուհետև, ռեակցիայի մասին պետք է հայտնել Vaccine Adverse Event Reporting System-ին (VAERS) (Պատվաստանյութերի հետ կապված անբարենպաստ երևույթների հաշվետվությունների համակարգին): Այդ տեղեկատվությունը պետք է գրանցի ձեր բժիշկը, կամ դուք դա կարող եք անել ինքներդ՝ VAERS վեբ կայքի միջոցով՝ [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov), կամ զանգահարելով **1-800-822-7967** հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

**6 Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիրը**

National Vaccine Injury Compensation Program-ը (VICP) (Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից վնասվածք ստացած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ վնասվել են պատվաստանյութից, կարող են իրազեկվել ծրագրի և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով **1-800-338-2382** կամ այցելելով VICP-ի վեբ կայք՝ [www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation): Փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար կա ժամանակային սահմանափակում:

**7 Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:**

- Հարցրեք ձեր առողջապահական խնամք ապահովողին: Նա կարող է ձեզ պատվաստանյութի փաթեթի ներդիրը տալ կամ առաջարկել այլ աղբյուրներ՝ տեղեկություններ ստանալու համար:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների) հետ՝
  - Չանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
  - այցելեք CDC-ի վեբ կայքը՝ [www.cdc.gov/vaccines](http://www.cdc.gov/vaccines)

DCH-3932A AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.

Vaccine Information Statement  
Serogroup B Meningococcal Vaccine

08/09/2016

Armenian



42 U.S.C. § 300aa-26

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: